

891.542-93-2


Մ-48

ԱՐՏԱՇԷՍ Պ. ՄԵԼԻՔ-ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

„ՄԵՆՔ-ԱՊԱԳԱՅ

ՀԵՐՈՍՆԵՐ ԵՆՔ“

Վոդեիլ մի գործողութեամբ



Թ Ի Ֆ Լ Ի Զ

Էլեկտրատպ. տպ. Ն. Աղանեսյանի Պոլիգ. 7.
1911

891-988 156/4 - Duplication
15-46

collected - unorganized
Horned Lark
SW 5-6169 16/10/81

[illegible]

ПК з. 392 1 3.000.000

V-48

и у

ԱՐՏԱՇԷՍ Պ. ՄԵԼԻՔ-ՄԱՏԹԵՆՆԱՆ

2011-07

„ՄԵՆՔ-ԱՊԱԳԱՅ

ՀԵՐՈՍՆԵՐ ԵՆՔ՝

Վոդեւիլ մի գործողութեամբ

$$\begin{array}{r} 1004 \\ \hline 15023 \end{array}$$

၁၀၂၁

Էլեկտրաբաժնի պարտնիստ Օր. Ն. Աղանեանի, պոլիգ., 7.

1911



27 JUN 2013

11173

Настоящая пьеса, подъ заглавіемъ „Мы герои будущаго“, соч. П. Меликъ-Матевосянца, разрѣшена Намѣстникомъ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА на Кавказѣ, для представленія на сценахъ края (Отзывъ Канцеляріи за № 3715—911).

26 Февраля 1911 г. г. Тифлисъ

И. Д. Предсѣдателя Комитета Гаккель

Секретарь Н. Меликъ Нубаровъ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՄԱՐՏԻՐՈՐ—19	տարեկան
ՍԱՄՍՕՆ—18	»
ՄԿՐՏԻԶ—20	»
ԱՐԱՄ—16	»
ԼԵՒՈՆԶԻԿ—21	» (ուսանող)
ԱՐՇԱԿ—18	»
ՀԱՅԿԱԶ—24	» (ուսանող)



Ա. Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բեմը պատկերացնում է մի հասարակ սենեակ. աջ եւ ձախ փողբիկ կուշետկաներ. ազատ տեղերում աթոռներ: Մէջ տեղը դրած է մի սեղան, սեղանի երկու ծայրին զրքեր դարսած: Դէպի հասարակութեանը նայող կողմերից կուշետկաների տակ մի-մի չեմօղան. Դիմացի անկիւններից մէկում կախած են անդրավարտիկներ եւ երկու երեսորբիչ:

ՏԵՍԻԼ 1

ՄԱՐՏԻՐՈՍ Է ՍԱՄՍՈՆ

(Բեմը ըացելուց մի փոքր լուռիւն է տիրում. յանկարծ ներս են մտնում Մարտիրոսն եւ Սամսոնը)

ՄԱՐ.—(զրքերը դնելով սեղանի վրայ) Ուրեմն գերմաներէնից երկու ստացայ, չէ՞, Սամսոն: Այ քեզ անյաջողութիւն:

ՍԱՄ.—Այո, ես էլ լատիներէնից երկու ստացայ: (ծիծաղելով) Ոչինչ, շատ մի մտածիր այդ մասին:

ՄԱՐ.—Դու տեսար օրիորդ Աստղիկին, թէ որքան էր անպիտանը գեղեցկացել: Գիտես ինչ, Սամսոն, ես մտադրւել եմ նրան առաջարկու-

լաքւեն բոլոր ընկերները, այն ժամանակ կըս-
կսենք մեր կոնծաբանութիւնը: Էհ, плевать, վաղն
էլ չենք գնալ ուսումնարան: Երկրորդ օրն է ա-
հա, որ քեֆ չեմ արել:

ԱՐ.—(ծիծաղելով) Ընդամենն երկու օր է
և դու զարմանում ես: Այ քեզ զարմանալի բան:

ՄԿՐ.—Գիտես ի՞նչ, բանը սրանուֆն է: Ե-
թէ մի մարդ, արհեստաւոր իհարկէ, մի երկու-
երեք օր բան չի անում, նա մի տեսակ կարծես
մի բան կորցրած լինի և կարծես արւեստը մո-
ռացած լինի: Հասկացա՞ր ինչ եմ ուզում ասել:

ԱՐ.—Այո, այժմ հասկացայ: (ծիծաղելով)
Ուրեմն դու էլ ես վախենում որ քեֆ անելը մո-
ռանաս: Ну братъ, չենք մոռանալ. բոլորովին
միամիտ ֆնայ այդ կողմից:

ՄԿՐ.—Յոյսով եմ որ չենք մոռանալ: Спу-
шай Арамъ, գնա Արշակին ասիր, թող նա
շուտ գայ և ասիր որ վաղը ոչ մէկս էլ չենք
գնալու ուսումնարան. եթէ ընդդիմանայ՝ ուղղա-
կի քաշ տալով բեր նրան: Չմոռանաք մի քա-
նի շիշ էլ գարեջուր բերէք:

ԱՐ.—Ինչ ես կարծում, միթէ կարելի է
մոռանալ: Ուրեմն գնամ Արշակի մօտ, իսկ Լե-
ւոնչիկին կասեմ: Նա շատ լաւ տղայ է, նոյնիսկ
կարելի է ասել խնջոյքի զարդարք է: Ты мо-
жешь себѣ представить անպիտանն ինչպիսի
սիրահարական երգեր է երգում: Это прямо уди-

вительно: Գոնէ իմ կարծիքով չի խանգարիլ, ե-
թէ նա էլ ներկայ լինի մեր այս խնճոյքին:

ՄԿՐ.—Ну чортъ съ тобою, գնա, միայն
թէ շուտ:

ԱՐ.—Ուրեմն գնամ: (Մի քանի քայլ գնում
է ու յետ դառնում) Մկրտիչ, ծխախոտ ունի՞ս
ծխելու համար:

ՄԿՐ.—(զրպանիցը հանում է մի ծխախոտ
եւ տալիս Արամին) Խնդրում եմ չմոռանաս տւած
պատէրներս: Լսեցի՞ր Արամ: Համեցէք ծխա-
խոտը:

ԱՐ.—(ծխելով) Լաւ, хорошо, я скоро при-
ду: (Գնում է)

ՏԵՍԻԼ 3

ՄԿՐՏԻՉ

ՄԿՐ.—Մեր ծնողներն էլ կասեն, թէ մենք էլ
կարդացող տղայ ունինք: (Մի փոքր լռելուց յետոյ)
Այ քեզ անպիտան բան, վաղայ համար պէտք է շա-
րադրութիւն գրենք, բայց մենք այստեղ խնջոյքի
ենք հաւաքւել: Чортъ возьми, չեմ հասկանում,
թէ Սամսոնն և Մարտիրոսն երբ են վերջացնելու
ճաշը: Չահրումար ուտէք դուք, настоящие идіоты,
կարծես չեն իմանում, որ մենք այսօր քեֆ պի-
տի անենք: Ախ, որքան լաւ կլինէր, որ օրի-

որդ Սիրանոյշը լինէր մեզ մօտ, ընկերակցէր մեզ: Կարծես թէ փայլուն ասող լինի անպիտանը. красавица прямо: Խօսելիս ես քնում եմ ապշած, թէ ինչպէս է նա իրեն քնքոյշ շրթերէն քնքերը շարժում: Հրեշտակա ես, իմ Սիրանոյշ (օղտյին համըրոյր ուղարկելով): Ուրեմն այս տարի չէ միւս տարին կաւարտեմ գիմնադիան, հաւատացած եմ, որ ծնողներս ոչինչ չեն ասիլ. հէնց այն ժամանակը կասեմ ծնողներիս, թէ ես կամենում եմ պսակւել օրիորդ Սիրանոյշի հետ: Լաւ, մի բոպէ ենթադրենք, թէ եկող տարին չյաջողացրի աւարտել, պարզ ծուլութիւն արի, այն ժամանակ ուրեմն Սիրանոյշը կասի թէ ես անբարեխիղճ, ծոյլ ու անպէտք տղայ եմ չէ՞. էն плевать на нее, Սիրանոյշից լաւերն էլ կան: Օ՛խ, ինչքան վատ բան է պատանեկան հասակում սիրահարւելը: (Մի քաժակ գինի է ւծում ու խմում) Է՛հ դարդեր, դարդեր: Անամօթները չեկան: (Ներս են մտնում Սամսօնն ու Մարտիրոսը)

ՏԵՍԻԼ 4

ՄԿՐՏԻՉ, ՍԱՄՍՕՆ և ՄԱՐՏԻՐՈՍ

ՄԿՐ.— Տօ կատակներ էք անում մեզ հետ ինչ է: Что вы за люди? (Բարկացած) Բարև ձեզ: Ապա նայէք տեսէք, ինչեր եմ բերել:

ՄԱՐ.— (ուրախացած) Կեցցես, Մկրտիչ: Մոռացայ հարցնեմ, մեր ընկերներից լինելու են թէ ոչ: Ս

ՄԿՐ.— Ինչպէս չէ, անպայման: Ես Արամին ուղարկեցի Արշակի և Լևոնչիկի մօտ, որ նրանց էլ իմացում տայ, զան ընկերակցեն մեզ հետ: Կարծեմ որ վատ չեմ արել, չէ՞, Մարտիրոս:

ՄԱՐ.— Իհարկէ ոչ, աւելի մեծ ուրախութիւն կպատճառէր ինձ եթէ հրաւիրէիք և ուսանող Հայկազին: Նա իմ կարծիքով, ազնիւ տղայ է, լաւ կուրախացնի մեզ:

ՍԱՄ.— Ճիշտ է ասում Մարտիրոսը. ես էլ համաձայն եմ նրա ասածների հետ:

ՄԿՐ.— Ну, и я соглашаюсь. Սամսօն, եթէ ներողութիւն չի պատճառիլ քեզ, դու գնա կանչիր Հայկազին, если только не обижается. Լաւ չեմ ասում, Մարտիրոս:

ՄԱՐ.— Ոչինչ, Սամսօն. գնա կանչիր. բայց շուտ եկէք:

ՍԱՄ.— (գլխարկը վերցնում է) Ոչինչ, ոչինչ, ես կգնամ: Մոռացայ ծխախոտս վառեմ:

ՄԱՐ.— Ես երկու հատ լուցկի եմ վերցրել խանութից, վերցրու այս մէկը (Սամսօնին տալով)

ՍԱՄ.— (վերցնում է) Ես իսկոյն և եթ նրան իմացում տամ. (Գնում է):

ՄԿՐ.—Մարտիրոս, գնա ձեր տանտիկինին խնդրիր թող նա երկու բաժակ, մի քանի հատ դանակներ և ինչ որ հարկաւոր է մի խօսքով տայ. пожалуйста Мартиросъ, прошу. Շուտով նրանք կհաւաքւեն: Երևի Արամն, Արշակն և Լեւոնչիկը շուտով, մինչև մի բոպէն այստեղ լինեն, քանի որ նրանք շատ հեռու չեն ապրում ձեզանից, ընդամենը տարածութիւնը մի փողոց է: Գնա, գնա. մի ամաչիր: Այստեղ ի՞նչ ամաչելու բան կայ. Ну скорѣе дорогой:

ՄԱՐ.—Միթէ ամօթ չէ, եթէ գնամ ասեմ այս ինչ իրերը տւէք: Զէ՛ որ նա կհետաքրքրւի և կկասկածի որ ինչեր ենք անում: Զհանդամին թէ կկասկածի. նրա փողովը չեմ խօմ ուրախանում: Плевать на мнѣніе людей. Գնամ այս բոպէիս: Ես իմ Աստուածը, եթէ հարց ու փորձ աւրաւ, ուղղակի ասելու եմ убирайтесь вы къ чорту. (գնում է):

ՄԿՐ.—Էն ախմախ Արամն էլ չեկաւ: Ուղիղ 10 բոպէ է որ սպասում եմ նրանց: Զարմանալի մարդիկ են: Կարծես կատուի քայլերով են գալիս, (որ այսքան ուշանում են: Ես իմ Աստուածը թէ զիտենամ երբ ենք սկսելու: (յանկարծ լսում է ոտերի ծայներ) Այ ձեր գլուխները մեռնի, կարծես պսակ են գնում: (Ներս են մըտնում՝ Արամը, Լեւոնն ու Արշակը):

ՏԵՍԻԼ 5

ՄԿՐՏԻԶ, ԱՐԱՄ, ԱՐՇԱԿ և ԼԵՒՈՆՉԻԿ.

ԱՐ.—Մենք արդէն եկանք, Մկրտիչ: Այս էլ քո գարեջուրը: (հանելով գրպաններից 4 շիշ).

ԼԵՒ.—Օ՛ բարև, Մկրտիչ: Պատմիր товарищъ, ախորժակդ ի՞նչպէս է: Գործերդ ի՞նչպէս են գնում: (նստում է դիմացը)

ՄԿՐ.—Ничего, առ այժմ լաւ են գնում գործերս: Իսկ քեֆս պէտք է ասել, որ շատ լաւ է: Քեֆ անող մարդու ախորժակը չէս իմանում որ վատ չի կարող լինել: Словомъ, все въ порядкѣ.

ԱՐ.—Շնորհակալ եմ, Մկրտիչ, քեզնից, որ ինձ էլ ես իմացում տւել: Մի լաւ պէտք է քեֆ անենք, թէ չէ դարդերը մեզ ուղղակի սպանեցին:

ՄԿՐ.—(հառաչելով) О горе, горе. Հէնց այդ ցաւերն են մարդի խեղդում: Երեակայիր ողորմելի վիճակս, Արշակ: Ամբողջ 25 օր է որ օրիորդ Սիրանոյշը նամակ չի գրում: Նա խոստացել է մշտական նամակներ գրի իր կեանքից, առողջութիւնից, բայց չկայ: Да, պէտք է ասել որ ես էլ եմ մեղաւոր: Երևի նա ինձ տեսել է հարբած և զգւել է: (հառաչելով) Эхъ любовь, любовь. թէ որքան է անպիտանը զմայ-

լեցնում ինձ իր գեղեցկութիւնով, երևակայել անգամ դժւար է: Да, դժւար է:

ԱՐ.—Մի մածիր այդքան. հիմա ուրախութիւն անելու ժամանակ է, իսկ դու երևակայութեան մէջ ես: Սէրը կարող է մարդի կեանքը կիսել:

ՄԿՐ.—Совершенно верно: (Ժիծաղելով) Յանկարծ մի տարուց յետոյ իմ ընկերները տեսնեն ամուսնացած Սիրանոյշի վրայ և թե-թեի տւած ես և Սիրանոյշը գնում ենք: Երջանկութիւն է ուղղակի, блаженство. Լաւ է, թէ որ երազ չգառնայ: Հակառակ դէպքում, եթէ Սիրանոյշը չհամաձայնի, քարն իրեն գլխին. նրա նմանները շատ կան: О женщины, женщины, եթէ նրանց ճաշակով բան բռնեցիր, աչքների լոյսն ես, արեւից էլ առաւել ես, իսկ եթէ ոչ... դժոխքի սատանայից էլ վատ ես: (մի փոքր լռելուց յետոյ) Плевать на все: (Այդ ժամանակամիջոցին Արամն եւ Լեւոնչիկը պատրաստում են սեղանը):

ԱՐ.—Ճիշտ են քո բոլոր ասածները: Մի մտածիր. այս բոլէիս գինին և գարեջուրը կը հեռացնեն մեզնից բոլոր տանջող մտքերը: Երանի նրան, ով որ հնարել է դրանց (ցոյց տալով գինին) Անհնարին է որ արքայութիւնումը չլինի հնարողը:

(Ներսն են մտնում Սամսոնն եւ Հայկազը):

ՏԵՍԻԼ 6

ՄԿՐՏԻՉ, ԱՐԱՄ, ՍԱՄՍՕՆ, ԱՐՇԱԿ, ԼԵՒՈՆՉԻԿ և ՀԱՅԿԱՉ:

ՀԱՅԿ.—Բարև ձեզ բոլորիդ (ձեռք տալով բոլորի հետ): Ո՛ւմ էք սպասում այսքան ժամանակ: Մարտիրոսն ուր է գնացել: (ձայն է տալիս) Մարտիրոս, Մարտիրոս: Ամեն ինչ տաք-տաք պէտք է մարդ անի: Այ քեզ մարդ. գնացել է ու հիմա էլ չի գալիս: Мерзавецъ настоящій, իսկական:

ՄԿՐ.—Մի թեթև համբերիր. նա գնացել է բաժակներ, վիլկաներ, նոթիկներ բերի: (նայում է ժամացոյցին) Уже два часа: Աւելի լաւ է մենք սեղանը պատրաստենք մինչև նրա գալը: (Պատրաստում են)

ԼԵԻ.—Что вы торопитесь, господа. Բաժակներն ածեցէք, խմենք մեր այսօրւայ խընջոյքի կենացը (Մկրտիչը լցնում է բոլորի բաժակները). Да здравствует вино.

Ура... (միաձայն — Ура... խմում են)

ՄԿՐ.—Это я понимаю, ընկերներ:

ԼԵԻ.—Արքայութիւնը գնայ քո հնարողը. դամարներս տաքացաւ: (Ներս է մտնում Մարտիրոսը բաժակները, դանակները եւ մի քանի կտոր հաց ձեռին):

ՏԵՍԻԼ 7

ՄԿՐՏԻԶ, ԱՐԱՄ ՍԱՄՍՕՆ, ԱՐՇԱԿ, ԼԵՒՈՆՉԻԿ, ՀԱՅ-
ԿԱԶ և ՄԱՐՏԻՐՈՍ

ՄԱՐ.—Օ՛ բարե ձեզ. ընկերներ: (Դնելով
բոլորը սեղանի վրայ) Դէ սկսենք արդէն, խմենք,
ուրախանանք: Գին չունի ոչ մի բան. արժէք
չունի այս աշխարհը: Մնում է մեզ լաւ կեանք
վարել, ուրախանալ ու վերջն էլ մեռնել: Ըն-
կերներ, ես իմ կողմից ընտրում եմ կառավա-
րիչ մեզ վրայ Լեոնչիկին, իսկ նրան օգնական
Հայկազին: Համաձայն էք, ընկերներ, թէ ոչ: (Մի-
աձայն—համաձայն ենք)

ԼԵՒ.—Ոչինչ, ես կը կառավարեմ: Խորին
շնորհակալութիւնս եմ յայտնում ձեզ, ընկերներ:
Այդ դէպքում խնդրում եմ ածեցէք ձեր բա-
ժակները, պէտք է մաքուր խմել, մինչև վերջը
բաժակի: Ես առաջարկում եմ մի լաւ կենաց:
Խմենք իւրաքանչիւրս մինչև վերջը բաժակի
նրա, այն հրեշտակի կենացը, որին ամբողջ հո-
գով և մարմնով ենք սիրում, նւիրւած: (միաձայն
—Браво-Левончикъ: Խմում են)


ՀԱՅԿ.—Թոյլ տւէք ինձ, ընկերներ, մի փոք-
րիկ ճառախօսութիւն անեմ այդ կենացի, թանկա-
զին կենացի առթիւ: (Միաձայն—Համեցէք по-
жалуйста.):

Իհարկէ այդ կենացը մենք պիտի խմենք մին-
չև վերջը բաժակի, քանի որ իւրաքանչիւր երի-
տասարդը մեզնից անհնարին է որ չզգայ իր մէջ
այդ սէրը. նամանաւանդ երբ գինին տեմնում է:
Շատ պարզ է բոլորիս համար, ինչպէս երկու
անգամ երկու, որը հաւասար է չորսի, որ այս
րոպէիս մեր ցաւերը, վշտերը գտնւում են գի-
նու մէջ. իսկ որպէսզի այդ մտատանջող ցա-
ւերին վերջ տալ, պէտք է նոյնիսկ րոպէ չու-
շացնել: Bravo товарищи, որ իսկոյն և եթ ա-
ռանց ուշացնելու խմեցիք: Ես ուսանող եմ եր-
րորդ կուրսի. բայց ասացէք խնդրեմ ինչո՞ւ չեմ
կարողանում գնալ ուսման. պատճառը դրանք
են, այդ քնքոյշ արարածները, երկնային հրեշ-
տակները:

Մի վայրկեան ենթադրենք, թէ ես գնացի
ուսանելու, այն ժամանակ ո՞ւմ թողնեմ, յանձ-
նեմ սիրուհիս (հառաչելով) Да, трудно това-
рищи: Ե՛հ թողնենք. աւելի լաւ է մեր քեֆը շա-
րունակենք: Ինչպէս երևում է բոլորս էլ վշտոտ
ենք, այն էլ ծաղիկ, կոկոն հասակում:

ՄԿՐ.—(ծնւացնելով իրան շատ տխուր) Այո,
այդպէս է: Ես արդէն տարւեցի:

ԼԵՒ.—Товарищи, внимание пожалуйста.
Ես կամենում եմ մի լաւ երգ երգել Ա. Իսա-
հակեանի երգերից: (Այդ ժամանակամիջոցին նը-
րանք խօսում են իրար հետ). Սպասեցէք, друзья



тише. Տօ, լսեցէք է:

ՀԱՅԿ.—Խնդրում եմ ուշադրութեամբ լսեցէք:

(Միաձայն—ներողութիւն)

ԼԵՒ.—Տօ, չեարչի բազար է մեր ուրախութիւնը, ինչ է: (Երգում է)

Մարօս լօլանդ դաշտի միջին,
Վարդ ու նարգիզ էր քաղում,
Ալ թշերին, լալ շրթունքին,
Մէկ էլ նստաւ խեղ մեղուն:

* *

Նախշուն աղջիկ, հանգիստ կացիր,
Մի վախենար չեմ կծում,
Լռիկ, ֆնջիկ լալ շրթունքից,
Անոյշ մեղրն եմ ծըծում:

Վառ վարդերի հարիւր անգամ,
Ալ թշերդ բոյր ունի.
Զառ նարգիզից հազար անգամ,
Լալ շրթունքդ մեղր ունի:

* *

Վայ ինձ, ինձնից բիւր-բիւր անգամ,
Մեղուն արդ ու յարգ ունի:

* *

Օ՛րս սէր. որքան քաղցր ես, այնքան էլ
դառն ես: Հ՛մ Մկրտիչ, լսեցիր չէ՞ ինչ երգ երգեցի:

ՄԿՐ.—Այո, լսեցի, բայց խնդրում եմ այլ
ևս սիրահարական երգեր չերգել. քանի որ մեր
սրտերը դեռ շատ քնքոյշ են, կարող են փաս-
ւել: Օ՛րս, սէր անկեղծ: Անկեղծ սէրը կարող է
իջեցնել երկնային անհոգ թռչուններին, որոնք
ոչ մի հոգեկան հոգս չունին: Անկեղծ սէրը կա-
րող է իջեցնել այն վառած, պճնած աստ-
ղին (Յոյց տալով երկինքը): Լաւ, մոռանանք,
ընկերներ, այդ բոլորը: Любось, դահուրմար դառ-
նաս դու: (Մի փոքր լռելուց յետոյ) Плевать на
все:

ՍԱՄ.—Ինչպէս երևում է (ծիծաղելով) Մը-
կրտիչ, քո աստղն առաստաղումն է գտնւում: (Բո-
լորը ծիծաղում են): Թոյլ տուր, կառավարիչ, ես
մի կենաց առաջարկեմ:

ԼԵՒ.—Իրաւունք եմ տալիս: Пожалуйста
կարող ես:

ՍԱՄ.—Խմենք այս բաժակը մեր ընկերա-
կան սէրի կենացը: Bravo, ես իմ հոգիս, մենք,
որ չմերժեցինք մէկս-մէկու: Մեր սէրի կենացը,
ցանկանանք մէկս-մէկու երջանկութիւն և զուրկ
չմնանք այսպիսի խնճոյքներից:

(Միաձայն—Bravo, մէկ-մէկի ըաժակի խը-
փելով խմում են):

ԼԵՒ.—Ну, ну тише товарищи. Տօ Մարտի-
րօս, ինչո՞ւ դու մի տեսակ լռել ես, չես խօսում կամ
ով է կարողացել քեզ վիրաւորել. խնդրում եմ

ասիր, մի վախենալ. մենք նրա զուբերը կկոտրատենք: Наконецъ, скажи не бойся. Շատ զարմանալի է ինձ համար, թէ այդ պարոնը քանի զլխանի է եղել, որ համարձակել է պատւիդ դիպչելու: Какой мерзавецъ оскорбилъ твою честь.

ՄԱՐ.—Ոչ ոք ընկերներ, դուք հանգիստ ձեր քեֆը շարունակեցէք: Յանկարծ յիշեցի օրիորդ Աստղիկին, նրա գեղեցիկ անունը, երկու փայլուն աստղերի նման աչերը, նրա սև-սև ունքերը... Ախ թէ որքան եմ սիրում նրան, այդ թող վկայ լինեն իմ սիրտն ու հոգին:

ՀԱՅԿ.—(զարմացած) Ու՛մ յիշեցիր, օրիորդ Աստղիկին: (վեր կենալով տեղից) Այ քեզ սարսափելի դրուժիւն: Բայց ոչինչ, ես դրա հետ կխօսեմ յետոյ: (Նստում է)

ՄԱՐ.—Այո, Հայկազ, նրան յիշեցի, ինձ կեանք տուողին: Թոյլ տւէք ինձ խմել նրա թանկագին կենացը:

ԼԵԻ.—Налейте стаканы.

ՄԿՐ.—(մոմոալով) Ես արդէն... (գլուխը դնում է սեղանի վրայ)

ԼԵԻ.—Մկրտիչ, վերցրու բաժակդ: Միատեղ խմենք օրիորդ Աստղիկի կենացը:

ՄԿՐ.—Լաւ, խմենք օր...ի...որդ Աստղիկի կենացը: (դարձեալ գլուխը դնում է սեղանի վրայ ու քնում)

ՄԱՐ.—Խմում եմ ինձ կեանք տուողի կենացը. ցանկանում եմ... (լաց լինելով) նրան... Օ՛խ Աստած իմ, որքան դժուար է:

ՄԿՐ.—Плевать на все (փնթփնթալով): (Միաձայն — ինչ է պատահել քեզ, Մարտիրոս. քացի Հայկազից):

ՄԱՐ.—Ոչինչ, ընկերներ. եղէք հանգիստ քուրորդին: Ես այս բաժակը պիտի խմեմ քանի որ ամբողջ թոյնս գտնւում է այս բաժակի մէջ: (խմում է)

(Խմում են նաեւ մնացածները)

ԱՐ.—(Տեղից վեր է կենում եւ գնում անկողնի վրայ պառկում)

ԱՐ.—(գլխին խփելով) Կառավարիչ, ես դիմում եմ ձեզ, որպէսզի թոյլ տաք ինձ մի լաւ կենաց առաջարկելու:

ԼԵԻ.—Имѣешь полное право. (Ժպիտն երեսին):

ԱՐ.—Որպէսզի երկար չտևի իմ ճառախօսութիւնը, ուստի աւելի լաւ է կարճ կտրել: Խմենք մեր համեստութեան կենացը: (Ժողովըրդին) Բայց պէտք է ասեմ, որ հնար չկայ, անպայման պէտք է մէկն ու մէկը ծեծւի: Ես արդէն հասկացայ բանը ինչու՞ն է:

ԼԵԻ.—Браво Аршакъ. Շուտ մաքրեցէք բաժակները:

ՀԱՅԿ.—Ոչինչ. ես ինձ թոյլ չեմ տալ լը-

ուել: Կպարզւի ամենը. (ժողովրդին)

ԼԵԻ.—Ի սէր Բրիստոսի товарищи, խընդ-
րում եմ կարգապահութիւնը պահպանել: Про-
шу. թողեցէք ձեր մասնաւոր հաշիւները, խընդ-
րում եմ վերջապէս: Մարտիրոս, խնդրում եմ
այլ ևս մի մտածիր օրիորդ Աստղիկի մասին:
Միթէ ամօթ չէ քեզ նման երիտասարդի հա-
մար մտածել այդքան խորը: Ուրախացիր, թէ
չէ մեր ճաշակն էլ կարող ես փչացնել:

ՍԱՄ.—(ժողովրդին) Վայ քո գլուխդ չմեռ-
նի, Մարտիրոս. երեւակայէք բաւական չէ որ ան-
ծանօթ է օր. Աստղիկի հետ, դեռ ինչպէս էլ
ճաք-ճաք է գալիս: Ստակէք դուք, կարծես հա-
ւաքւել են այստեղ օրիորդների դէմքերը նկա-
րագրելու: Ով չսիրահարւած... բայց...

ԼԵԻ.—Զարմանալի բան է. Մկրտիչն և Ա-
րամը տարւեցին արդէն: (ծիծաղելով) Товари-
щи բաժակները налейте. (Արշակը լցնում է
ընդոր ըրժակները) Խմենք за здоровье մեր քը-
նած ընկերների. ցանկանանք նրանց հանգիստ
քուն, լաւ երազներ: Ի հարկէ, շատ պարզ է,
Մկրտիչն երևի երազումն օրիորդ Սիրանոյշի
հետ է խօսում: Նա այս րոպէիս ամենաեր-
ջանիկն է աշխարհիս երեսին. իսկ Արամը, (ծի-
ծաղելով) կարծես աւանակը կորցրած մոլորդու-
սի լինի: Ну господа, хм! за здоровье на-
ших спящих друзей. (ժիծալով—խմենք մեր

քնած ընկերների կենացը): Արշակ, երբ տեսնում
ես բաժակները դատարկւում են, դու առանց
ուշացնելու կարգի բերնրանց, ի հարկէ հաս-
կանում ես ինչ եմ ասում:

ԱՐ.—Է՛, ինչպէս չեմ հասկանում: Ես գը-
նամ դարեջուրն էլ բերեմ, թէ չէ նրանք կա-
րող են փչանալ այնտեղ: Իմ կարծիքով շատ
մեծ մեղք պէտք է համարենք մենք մեզ հա-
մար, եթէ մենք յարգանքով չվերաբերւենք դէ-
պի հնարողը:

ԼԵԻ.—Молодецъ товарищъ. Ես ցանկա-
նում եմ քեզ հետ համբուրւել: Իսկական գիտ-
նական մարդը չէր կարող ասել այդ խօսքերը:

ԱՐՇ.—Համեցէք, մեծաւ ուրախութեամբ:
(համբուրում են)

ԼԵԻ.—Экстра пью за твое здоровье. ցան-
կանում եմ քեզ աւելի լաւ շնորհք: Նկատւում
է որ իսկական ուսանող կդառնաս. Bravo, пью
за твое философство. Խմեցէք ընկերներ: Со
улышкою пью за все: (խմում են)

ՄԱՐ.—Հայկազ, ինչո՞ւ համար ես այդպէս
մտածում, ի՞նչու չես ուրախանում:

ՀԱՅԿ.—Է՛հ ոչինչ: Մէկն ու մէկը ինձ խայ-
թեց, մոծակից էլ վատ:

ՄԱՐ.—Խնդրում եմ, ասիր տեսնենք այդ
որ ապուշն է եղել:

ՀԱՅԿ.—Միթէ չգիտես որ աշխարհում ա-

պուշներն աւելի շատ են, քան խելօքները:

ՄԱՐ.—Ի հարկէ շատ պարզ է. բայց էլի, մի թագցնիր, ուղիղն ասա:

ԱՐ.—Տօ, ոչինչ, ոչ ոք. շատ չեն երկարացնի:

ՍԱՄ.—(Մոռոտով տեղից վեր է կենում ու գնում այն միւս տախտի վրայ պառկում): Գնամ քնեմ, գուցէ ես էլ սիրունիս տեսնեմ:

ԼԵԻ.—Հարկաւոր է մի թեթեւ փողոցին նայել, գոնէ պատուհանից: (Երգելով մօտենում է պատուհանին):

Նախշուն աղջիկ, հանգիստ կացիր,

Մի վախենար չեմ կծում:

Լռիկ, ֆիլիկ լալ շրթունքից,

Անոյշ մեղրն եմ ծրծում:

Товарищи, նայեցէք, օրիորդ Սիրանոյշը գնում է: Վայ քո գլուխդ մեռնի, Մկրտիչ, զող կատուի պէս խռմփացնում է: Տօ Մկրտիչ, Մկրտիչ, վեր կաց: (Ղարձեալ մօտենում է պատուհանին) Здравствуйте Сирануйшъ, пожалуйста, համեցէք մեզ մօտ (կուխիսների յետեւից здравствуйте): (Դարձեալ մօտենում է Մկրտիչին եւ արթնացնում) Տօ дуракъ, Սիրանոյշը գնաց է: Այ քեզ իսկական идіотъ.

ՄԿՐ.—(շտապ-շտապ մօտենում է պատուհանին) здравствуйте Сирануйшъ... Տօ պուշներ հար է Սիրանոյշը: (քոլորը ծիծաղում են)

ԼԵԻ.—Նա անցաւ: Գլխարկդ վերցրու ու շուտ հասիր, թէ չէ նա կանհետանայ:

ՄԿՐ.—(վերցնում է գլխարկը ու իսկոյն դուրս գալիս) Ես շուտով այստեղ կլինեմ, հանգիստ եղէք: (գնում է)

ՏԵՍԻԼ 8

ԱՐՇԱԿ, ՄԱՐՏԻՐՈՍ, ԼԵՒՈՆԶԻԿ, ՀԱՅԿԱԶ, ԱՐԱՄ և ՍԱՄՍՈՆ.

ԼԵԻ.—(ծիծաղելով) Քո տունդ չքանդւի, Մկրտիչ. մօտեցել է պատուհանին և գոռում. здравствуйте Сирануйшъ, իսկ թէ ում է բարեւում, այդ ինքն էլ չգիտէ:

ԱՐ.—(ծիծաղելով) Քո աւանակ տունդ չքանդւի, կարծես թո՛ւնաւորած աղւէս լինէր, անպէս լոք-լոք էր անում: Ապա նայէք, գալու է այստեղ մի քանի ըոպէից յետոյ գլուխներս ճաքացնի, պարզ հաւատացած լինելով, որ երեսն էլ չի տեսել:

ԼԵԻ.—Այժմ այդ թողնենք: Товарищи, ես կամենում եմ մի թանկագին կենաց խմել: Խմենք մեր ծնողների կենացը, որոնք մեզ համար գիշեր ու ցերեկ տանջում են, որոնք չեն խնայում մեզ համար իրենց վերջին կոպէկը և մեր կենացը, որ մենք ենք լինելու ապագայի կտրիչ հերոսները:

(*ժիաճայն*—Браво *կառավարիչ*). (*լսում են*)
 Со, плюньте на всё.

ՀԱՅԿ.—(ծխում է) Ես կառավարկէի ձեզ մի բան: (*ժիաճայն*—օրինակ):

Թղթախաղի տալ. ինչպէս երևում է բոլորս էլ ձանձրացել ենք: Ընդամենը 5 (*հինգ*) բոպէ, ոչ աւել: (*ժողովրդին*) Այժմ խաղամ. յետոյ նրան, այն ապուշին ցոյց կտամ, гдѣ раки зимуютъ.

ԼԵԻ.—Այդ դէպքում, въ банкъ будемъ играть. Դէ որ այդպէս է շուտ փողերը հանեցէք: (*ընդորը հանում են*).

ԱՐ.—Մարաիրոս, իմ կարծիքով անհնարին է, որ քեզ խաղաթուղթ չլինի:

ՄԱՐ.—Ի հարկէ. (*զնում է քարծի տակից հանում եւ ընրում*)

ԼԵԻ.—Այդ դէպքում աւէք ես 50 կոպէկ բանկ դնեմ: (*քաժանում է*) Խնդրում եմ միայն կարգապահութիւն:

ՄԱՐ.—Բաց արա բոլորը (*քաց է անում թուղթերը*):

ԼԵԻ.—Չկայ: Բարեհաճիր 25 կոպ.: Իսկ դու, Հայկազ:

ՀԱԿ.—Բաց արա: Ո՛չ, Հկայ. այդ էլ քո 40 կոպ.

ԱՐ.—(*ինքնիրեն*) Ուրեմն պիտի 60 կոպ. տամ: (*թղթերը սեղանին խփելով*) Բաց արա:

ԼԵԻ.—(*քացանելով*) Տարար թէ չէ:

ԱՐ.—Այո, ես տարայ բոլորը: (*ընդորը վերցնում է սեղանից*)

ՄԱՐ.—Այժմ իմ հերթն է (*վերցնելով խաղաթուղթը*). Մի ուրբի մէջ տեղ, ուրեմն բանկ: (*Քաժանում է*): Բոլորը չէ, Հայկազ:

ՀԱՅԿ.—Բաց արա, այն բոլորը: (*Քարկացած մի թեթեւ*)

ՄԱՐ.—Համեցէք:

ՀԱՅԿ.—Ես տարայ: (*վերցնում է փողերը*): Այժմ իմ ժամանակն է: Ես դնում եմ 1 (*մէկ*) ուրբի 20 կոպ.: (*քաժանում է*) Չայնդ շուտ հանիր փողիցդ, Արշակ:

ԱՐ.—Նայիր. որքան ձեռքումս ունիմ, այնքանին էլ բաց արա:

ՀԱՅԿ.—Շատ լաւ, բաց անեմ: (*քաց է անում*) Չըկայ. ապա որքան է: Сколько у тебя.

ԱՐ.—55 կոպ. ընդամենն գումարը: Համեցէք:

ԼԵԻ.—Открой банкъ.

ՀԱՅԿ.—(*քաց է անում*) Չըկայ. 90 կոպէկը բարեհաճիր:

ԼԵԻ.—На возьми: Որքան յիմար կարտեր էր տո:

ՀԱՅԿ.—Քեզ որքան է հարկաւոր (*թղլ ձայնով*)

ՄԱՐ.—Рискъ-благородное дѣло. Բաց արա բոլորը, чортъ съ нимъ.

ՀԱՅԿ.—(ըաց է անում) Չըկայ: Ну, ну скорѣе: Բարեհաճիր 1 ռ. 40 կոպ.

ՄԱՐ.—Ստացիր 1 ռ. 40 կոպէկդ: Այ քեզ անյաջողութիւն:

ՀԱՅԿ.—Այժմ устроился банкъ. (վերցնում է քուրորդը) Это я понимаю.

ԱՐ.—Ընկերներ, ես մի բան կառաջարկէի, օրինակ: Ինչպէս մենք պայմանաւորուել ենք 5 (հինգ) ընդէից աւել չխաղալ, ուստի եկէք այսուհետ չխաղալ: Վերջին անգամ ես պիտի բանկ դնեմ, համեցէք, պատրաստ եմ: Ինչ կասեն մեզ մարդիկ, երբ լսեն, թէ թղթախաղի ենք տալիս. (միաձայն)—Շատ լաւ ես ասում Браво: Ես դնում եմ 2 ուրբի բանկ. (ըաժանում է): Հ՛մ, Լեոնչիկ, ձայնդ շուտ հանիր փորիցդ:

ԼԵԻ.—50 կոպ. փող ունիմ: Надо рискнуть. Чортъ съ нимъ, բաց արա:

ԱՐ.—(ըաց է անում) Լաւ, ամօթ է, չկայ, շուտ գցիր. գործերս վազ է: Մարտիրոս, դու երգիր տեսնեմ:

ՄԱՐ.—(գլխին խփելով) 1 ուրբի: Открой:

ԱՐ.—(ըաց է անում) Չըկայ:

ՄԱՐ.—Այ քեզ անպիտան բան. չկայ: Համեցէք 1 ուրբիդ:

ՀԱՅԿ.—40 կոպէկ փող ունիմ ձեռքումս: Ну скорѣе, открой Аршакъ:

ԱՐ.—Ձուխտ աչքերիս վրայ: (ըաց է անում):

Ես գիտեմ, չկայ: Пожалуй 20 копѣекъ:

ԼԵԻ.—(մեղմ ձայնով) 3 կոպէկ փող ունիմ. ոչ աւել, ոչ էլ պակաս, բաց արա:

ԱՐ.—Молодецъ Левончикъ, տարար: Ստացիր, այդ էլ քո 6 կոպէկը:

ԼԵԻ.—Լաւ եղաւ. ծխախոտի փող չունէի: Լաւ բան էր, բայց ափսոս:

ՄԱՐ.—(տաքացած) 50 կոպ.

ԱՐ.—(ըաց է անում) Դարձեալ չկայ:

ՄԱՐ.—Что за дурацкія карты. Ստացիր 50 կոպէկդ: Զարմանալի է ուղղակի:

ՀԱՅԿ.—1 ուրբի: Открой.

ԱՐ.—(ըաց է անում) Положи рубль, շուտ: Արդէն устроился банкъ, բաւական է: Այստեղ 7 ուրբից էլ շատ-շատ է: (վերցնում է քուրորդը եւ դնում զրպանը) Դարձեալ մեր քեֆը շարունակենք:

ՄԱՐ.—(վերցնում է խաղաթուղթը եւ տանում դնում է ըարձի տակ): (գլուխը քորելով) Այ քեզ անյաջողութիւն, կատարեալ ապուշութիւն էր:

ԼԵԻ.—Քո հնարողը անիծւի: Լաւ, մոռանա՛նք այդ բոլորը: Այժմ ուշադրութիւն товарищи. Խմենք մէկս մէկի կենացը և ում որ մենք պաշտում ենք:

ՄԱՐ.—Կեցցէ Լեոնչիկ: Թոյլ տուր ճակատիցդ համբուրեմ: Կարծես դու իմաստուն Սո-

դոմոնը լինես (համբուրում է): Կրկին խմում եմ
իմ Աստղիկիս կենացը, իմ հրեշտակիս կենա-
ցը... Ա՛խ Աստուած, ոչինչ չեմ ցանկանում.
միայն նա լինէր այստեղ ու ես նրան գրկած
համբուրէի. այն ժամանակ, էլ դարդս չէր
լինի: Կեանքս չեմ խնայիլ Աստղիկի համար:

ՀԱՅԿ.—Այժմ համբերութեանս բաժակը
լցաւ: (կատաղած) Ի՞նչ էիր ասում, Մարտիրոս.
խնդրում եմ կրկինը երկրորդ անգամ: (ժողովր-
դին) Ո՛չ, աւել համբերել չեմ կարողանում, պէտք
է պարզւի այժմ բոլորը:

ՄԱՐ.—Մի՞թէ չլսեցիր ինչ ասացի. խմե-
ցի Աստղիկի կենացն և այլն:

ՀԱՅԿ.—Նախ խնդրում եմ յետ վերցնես
խօսքերդ, եթէ ոչ, ես աւել համբերել չեմ կա-
րողանում: (Ընկերները ապշած նայում են):

ՄԱՐ.—Պատճառը: (Զարմացած)

ՀԱՅԿ.—Ես բացատրութիւն չեմ ցանկա-
նում տալ. միայն խնդրում եմ, թէ ոչ, լաւ հե-
տեանքներ չի ունենայ...

ՄԱՐ.—Ի՞նչ:

ՀԱՅԿ.—Այո, դու էիր ինձ խայթողը. ես
անկարող եմ տանել:

ՄԱՐ.—Դու մարդ ես ուղղում վախեցնել, ի՞նչ
է. չեմ հասկանում կատակներ ես անում, ի՞նչ է:
Այ բեզ զարմանալի տղայ. քո պատւին դիպու, որ
ես իմ սիրուհուս կենացը խմեցի՛:

ԱՐ.—Քո գլուխդ չմեռնի, Մարտիրոս. դեռ
անծանօթ, բայց արդէն սիրուհի է անւանում.
Այ բեզ սիրահարւածներ: (Ժողովրդին)
(Ներս է մտնում Մկրտիչը մոմալով)

ՏԵՍԻԼ 9

ՄԿՐՏԻՉ, ԱՐԱՄ, ՍԱՄՍՕՆ, ԼԵՒՈՆՉԻԿ, ՀԱՅԿԱՉ,
ՄԱՐՏԻՐՈՍ և ԱՐՇԱԿ

ՄԿՐ.—Գնացի հասայ թէ չէ, բարեկցի Սի-
րանոյշին. ուղեցի բարեւեմ, ձեռք տամ նրան,
բայց ինչ, նա ինձ խայթեց այնպէս, որ եր-
բէք ես չեմ կարող մոռանալ: Բաւական չէր այդ,
դեռ նա յամարձակեց խռկել, ասելով убирай-
тесть вы къ чорту. Լաւ, դու իմ գլխին օյին
խաղաս: Ես ցոյց կտամ: (Մի փոքր լռելուց յե-
տոյ) Плевать на все, թող չբարկի. նրանից
շատ լաւերն էլ կան: Տօ, Հայկազ, ի՞նչ ես մի տե-
սակ թթւել, ի՞նչ է պատահել քեզ, պատմիր:
Չլինի թէ քեզ էլ են խայթել, մոծակի նման:

ՀԱՅԿ.—Ոչինչ, ոչինչ, դու շատ մի գլուխ
ցաւացնի ի սէր Աստծոյ:

ՄԿՐ.—Տօ կարծես дуракъ լինես. ես քո
դարդիցն եմ Հարցնում, իսկ դու մարագ մտած,
շան պէս ինձ վրայ ես յարձակում: Զհանդա-
մին թէ պատմես: (մոմալով գնում է պառկում
տախտի վրայ, քնչելով Սամսօնին)

ՀԱՅ.—Վերջապէս քեզ խնդրում եմ ներողութիւն խնդրիր: (մօտենալով նրան)

ԼԵԻ.—Դուք էլ գլուխ էք ցաւացնելու, ի՞նչ է: Գնա տեղդ նստիր, Հայկազ, ամօթ է:

ՄԱՐ.—Վերջապէս ձայնդ կտրիր, լսեցիր, աւանակ: Կարծես իշխան լինես, այնպէս ես հրամայում: Ապուշ: (Կանգնելով տեղից) Каждый мерзавецъ будетъ приставать:

ՀԱՅԿ.—Мерзавецъ, сумасшедшій. Ձայնդ կտրիր, թէ չէ հոգիդ կհանես: Ողորմելի:

ՄԿՐ.—Երկուսդ էլ աւանակից պաղաւ չէք իմ կարծիքով:

ՄԱՐ.—(մօտենում է Հայկազին եւ մի ապտակ է տալիս): Ստացիր, այդ էլ քեզ նւէր:

ՀԱՅԿ.—Սկսում է կուել, խփելով նրան մի քանի անգամ) Անպիտան, мерзавецъ.

ԼԵԻ.—Товарищи, друзья, շուտ հասէք: Տօբաւական է ձեզ. իսկական վայրենիներ լինէք կարծես:

ԱՐ.—Ա՛յ քեզ ապագայի հերոսներ:

ՄԿՐ.—Ա՛յ ձեզ խօլերան գայտանի: Дикари настоящие. (մօտենալով նրանց)

ՀԱՅԿ.—(ապտակ է տալիս Մկրտչին) Հեռացիր, անամօթ:

ՄԿՐ.—Ա՛յ քեզ լաւ վարձատրութիւն: (Սկսում է կուել Հայկազի հետ): Դէ սատկեցէք:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր



<< Ազգային գրադարան



NL0401314

11173

Վաճառում է նոյն հեղինակի
Ս Ո Ւ Ր Է Ն Ի Կ Ա Ր Դ Ա Լ Ը
մանկ. պիես 1 գործ. 7 կ.

20

Տպիսիս «ԳԻՐ», «ՓԱՐՈՍ», «ԿԵՆՏ.» եւ
«ԳՈՒՏ.» գրախանութներում եւ Գանձակում
ժամհարեանի մօտ:

891.995

Վ- 48